ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2016թ. թիվ 132-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 253-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.8 կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետարանում տեղի ունեցած կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Մարզպետի, մարզպետի տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարի և մարզպետի խորհրդականների միջև պարտականությունները, ըստ բնագավառների համակարգման, բաշխել հետևյալ կերպ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել մարզպետի տեղակալների կողմից իրականացվող ընդհանուր բնույթի գործառույթները՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի «Լոռու մարզպետարանում ըստ բնագավառների համակարգման պարտականությունները բաշխելու և ՀՀ Լոռու մարզպետի 2011 թվականի օգոստոսի 19-ի թիվ 216-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 253-Ա որոշումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը իրականացնում եմ անձամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. մայիսի 6
ք.Վանաձոր